ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ՖԻՆՔԱ ՈՒՎԿ**
**Փակ Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55**
**Էլ. փոստ info@finca.am**

**Հաշվետվություն թիվ 8, 08.11.2021թ.**

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սպառիչ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Հարություն Չադրյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության ղեկավար** | | 08.11.2021թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Անուշ Պետրոսյան** | **Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն** | | 08.11.2021թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Վարդան Հարոյան** | **Վարչության անդամ, Գործառնական տնօրեն** | | 08.11.2021թ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Արամ Ղազարյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 08.11.2021. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

08 նոյեմբեր 2021թ.

Տեղեկանք

Համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի 28/10/2021թ.-ի թիվ 34/2021 որոշման՝ տնօրենների խորհրդի անդամները որոշեցին.

1. Հաստատել Ծրագրային Ազդագիրը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գրանցումից հետո մեկ տարվա ընթացքում մինչև 4,900,000,000 (չորս միլիարդ ինը հարյուր միլիոն) ՀՀ դրամ և/կամ մինչև 7,000,000 (յոթ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի թողարկումը արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով), ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալ սահմանել ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ի չափով:

2. ՀՀ դրամով թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Ընկերության Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով: